

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 32

«Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 18. 06. 2018թ. նիստի

Նիստը կայացավ հեռահար կապի միջոցով: Հաղորդակցություններ են ուղարկվել գիտական խորհրդի 27 (քսանյոթ) անդամներին:

Քվեարկել են գիտական խորհրդի 22 (քսաներկու) անդամներ:

1. **Սերոբյան Երվանդ Սերյոժի** — Ռեկտորի պարտականություններ կատարող
2. **Պետրոսյան Կարինե Ռահիմի** — Գիտական քարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
3. **Խաչատրյան Վալերի Գրիգորի** — Արհեստակցական կազմակերպության նախագահ
4. **Պողոսյան Բագրատ Ժորայի** – Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ
5. **Հովհաննիսյան Օֆելյա Հայկազի**- Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
6. **Տոնոյան Երվանդ Պարույրի** — Ռազմական ամբիոնի պետի տեղակալ- ուսումնական մասի պետ
7. **Խաչատրյան Թերեզա Արթուրի** — Գրադարան- ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն
8. **Ռաֆֆի Քալաջյան Վաղինակի** — Ֆինանսատնտեսական վերլուծությունների ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ- գլխավոր հաշվապահ
9. **Սարգսյան Սամվել Հովհաննեսի** — ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
10. **Հովհաննիսյան Անահիտ Սերյոժայի** — Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր,
11. **Դրմեյան Հենրիկ Ռուբենի** — Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
12. **Մարդոյան Ռուզաննա Արամայիսի** — Մանկավարժության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր
13. **Մելիքյան Թամարա Հմայակի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
14. **Տեր-Աղամյան Շուշանիկ Վոլոդյայի** — Բանասիրական գիտությունների թեկնածու, միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի ասիստենտ

- 15. Ղուկասյան Լուսիկ Հենրիկի**— Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ
- 16. Հակոբյան Լիզա Հելբերդի** — Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ
- 17. Սարգսյան Արմենուհի Հակոբի** — ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ, գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն
- 18. Մարտիրոսյան Լևոն Մովսեսի** — Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ,
- 19. Ավետիսյան Հրանուշ Կարապետի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ, «Անգլերեն լեզու և գրականություն» 3-րդ կուրսի ուսանողուհի
- 20. Չարչոյյան Արթուր Էդվարդի** — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմություն» 2-րդ կուրսի ուսանող
- 21. Հարությունյան Քաջիկ Հակոբի** — Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Աշխարհագրություն» 1-ին կուրսի ուսանող (մագիստրատուրա)
- 22. Հովհաննիսյան Լիլիթ Գոռի** — Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Աշխարհագրություն» 2-րդ կուրսի ուսանողուհի

ՕՐԱԿԱՐԳ

1. ՇՊՀ-ում հետազոտողի գիտելիքների գնահատման համակարգի հաստատման մասին

Պատ՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

1. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ-ում հետազոտողի գիտելիքների գնահատման համակարգի հաստատման մասին.

1. Ասպիրանտի/հայցորդի գիտելիքների գնահատումը կատարվում է ըստ ՇՊՀ-ում գործող գիտելիքների գնահատման համակարգի: Կրթական ծրագրերի յուրացման արդյունքում հետազոտողի ձեռք բերած գիտելիքների տարբերակված գնահատման սանդղակը բերված է Հավելված 1-ում:
2. Գիտելիքները գնահատվում են 2 գործոնով՝ ակտիվություն (40%) և ամփոփիչ ստուգում (60%):
3. Կրթական կառուցամասի ընդհանուր պատրաստվածության պարտադիր առարկաների անցումային շեմ ընդունված է 61 միավորը, իսկ մասնագիտական պատրաստվածության պարտադիր կամ կամընտրական առարկաներինը՝ 76 միավորը:
4. Մանկավարժական և հետազոտական պրակտիկաները գնահատվում են մեկ գործոնով:

ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

Գնահատման բազմաբաղադրիչ համակարգ	Տառային գնահատական	Գնահատականի պաշտոնական թվային համարժեքը	ՇՊՀ գնահատական
	A+	5+	96-100
	A	5	91-95
	A-	5-	86-90
	B+	4+	81-85
	B	4	76-80
	B-	4-	71-75
	C+	3+	66-70
	C	3	61-65
	C-	3-	մինչև 60

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել հետազոտողի գիտելիքների գնահատման ներկայացված համակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

22 անդամ. կողմ՝ 22, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **ռեկտորի պարտականություններ կատարող՝**

Ե. Սերոբյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Կ. Պետրոսյան